

ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի 2010թ. հունվար ամսվա հաշվետվություն

Հանդիպումներ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ

20.01 Արմեն Մարտիրոսյանը եւ Ստյոպա Սաֆարյանը «Ժառանգություն» կուսակցության Կենտրոնական գրասենյակում հանդիպեցին ԱՄՆ Պետդեպարտամենտում Հայաստանի հարցերով պատասխանատու Ջոզեֆ Ֆարելիի հետ: Ի թիվս այլ հարցերի, քննարկվեց նաեւ ԵԽՏԿ-ում «Ժառանգություն» խմբակցության ներկայացուցչի մեկուսացման հետ կապված հարցեր:

Հանդիպումներ եւ այցելություններ

- 12.01 Արմեն Մարտիրոսյանը «Ժառանգություն» խմբակցության պատգամավորների եւ ակտիվի հետ մասնակցեցին ՀՀ Սահմանադրական Դատարանի դիմաց կայացած ակցիային՝ ընդդեմ ստորագրված հայ-թուրքական արձանագրությունների՝ ՀՀ Սահմանադրությանը չհակասելուն:
- 12.01 Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց Ֆադեյ Սարգսյանի հոգեհանգստի արարողությանը:
- 20.01 Արմեն Մարտիրոսյանը այցելել է քրեակատարողական հիմնարկներ, հանդիպել քաղաքանտարկյալների հետ:
- 26.01 Արմեն Մարտիրոսյանը Աճի Պլազա հոթելում ՀՀ-ում Հնդկաստանի դեսպան Անիտա Մալոտրայի հրավերով մասնակցեց Հնդկաստանի Հանրապետության օրվա 61-րդ տարեդարձի տոնակատարությանը:
- 27.01 Արմեն Մարտիրոսյանը այցելեց Դատապարտյալների հիվանդանոցում գտնվող Սասուն Միքայելյանին:
- 29.01 Արմեն Մարտիրոսյանը մասնակցեց Ազգային ժողովի Առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովի նիստի աշխատանքներին:

ԶԼՍ-ներ

Հարցազր. մամուլ

27.01 Արմեն Մարտիրոսյան հարցազրույց տվեց Գյումրիի «Գալա» ՅԸ-ը:

Քաղաքացիներ

2010 թվականի հունվար ամսին քաղաքացիների կողմից Արմեն Մարտիրոսյանին հասցեագրվել է 2 դիմում:
2010 թվականի հունվար ամսին պաշտոնյաների եւ հասարակական կազմակերպությունների կողմից Արմեն Մարտիրոսյանին հասցեագրվել է 3 նամակ, այդ թվում քաղաքացիների խնդիրների լուծման և շնորհավորական: